

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Հայկազունք-ն ԷԱՃԱՊՁԲ-2023/2-1-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
25	Պանիր	Գայանե, Մարտիրոսյան ԱԶ, Տիգրան Շահնազարյան ԱԶ, Անուշ Գալստյան ԱԶ, Ռոմիկ Կիրակոսյան ԱԶ , Ռսկե Սեր, Ամասիայի պանրագործարան, Լոռվա կաթ,	Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ` Համապատասխան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 67 որոշմամբ ընդունված «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013): Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը` ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը` դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:Պանիր լոռի, դեղին աղաջրային պանիր, կովի կաթից, 36- 40% յուղայնությամբ: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս

քան 90%: Մատակարարումը միայն ջերմակարգավորվող տրանսպորտային միջոցով: \*Պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի անվանումը: Եթե պայմանագրի գործողության ընթացքում մատակարարումը իրականացվում է ոչ ամբողջական քանակով, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է: Մատակարարման պայմանները. \*

Մատակարարումը իրականացվում է ամեն օր: Ընդ որում, մատակարարումը իրականացվում է մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 07.00-ն: \*

Ապրանքը(ները) մատակարարվում է Գևորգի կողմից ներկայացված պահանջագրի հիման վրա, որտեղ Գևորգի կողմից պետք է հստակ նշված լինի ձեռք բերվող ապրանքի(ների) համառոտ նկարագրությունը, չափման միավորը, քանակը: Ընդ որում, պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից մեկ օր առաջ ժամը 10:00-ից մինչև 11.00-ն): Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է Էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով: \* Ընդունել ի գիտություն, որ պայմանագիր կնքելուց հետո Վաճառողը, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի համաձայն, պետք է գրանցված լինի սննդի շղթայում ընդգրկված սննդի շղթայի օպերատորների ցանկում, ըստ անհրաժեշտության: \* Պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը կամ գործարանային փաթեթավորումը, եթե դա կիրառելի է վերոնշյալ ապրանքի(ների) համար: Ընդ որում, յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փաթեթավորման վրա պետք է մակնշված լինի արտադրող ձեռնարկության անվանումը, արտադրանքի անվանումը, տեսակը, արտադրության ժամկետը, մատակարար ձեռնարկության անվանումը, պահպանման ժամկետը, ապրանքի քաշը, օրենքով սահմանված այլ տեղեկատվություն: Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն: \* Գևորգն իրավունք ունի յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փորձանմուշը ուղարկել փորձաքննության: Լաբորատոր հետազոտությունների արդյունքում բացասական եզրակացության ստացման դեպքում՝ ղեկավարվել ՀՀ

օրենսդրության պահանջներին համապատասխան:



## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ООО АЙКАЗУНК в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕЦХЦПQP-2023/2-1-CTPZ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
25			